ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 215 - Ա

ՎԱՐԴԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Վարդան Մելիքսեթյանի հետ կնքած 2021 թվականի նոյեմբերի 8-ի N463 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «գ» ենթակետը և Վարդան Մելիքսեթյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Արտաբույնքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Վարդան Մելիքսեթյանին ազատել տնօրենի պաշտոնից՝ լուծել նրա հետ 2021 թվականի նոյեմբերի 8-ին կնքած N463 աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքային վերջին օրը համարել 2026 թվականի օգոստոսի 20-ը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KHACHATRYAN ARSEN 3902800330

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026 թվական օգոստոսի 19

ք. Եղեգնաձոր